ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 սեպտեմբերի 2018թ. N 60-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի սեպտեմբերի 26-ի նիստի հետևյալ *օ ր ա կ ա ր գ ը.*

1.1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ավագանու 2013 թվականի հուլիսի 31-ի N 35-Ն որոշմամբ հաստատված կարգում փոփոխություն կատարելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.2. Հողամասերի նպատակային նշանակության փոփոխության նպատակով Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը հավանություն տալու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ Ա. Գառնիկյան

1.3. Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը օտարելու, աճուրդային եղանակով վաճառքի մեկնարկային գներն ու պայմանները հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ Ա. Գառնիկյան

1.4. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի N 4/5 հասցեում գտնվող հողամասը Ա. Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի N 4/1 հասցեում գտնվող հողամասի հետ փոխանակելու համաձայնություն տալու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ Ա. Գառնիկյան

1.5. Դրամական հատկացում կատարելու մասին.

զեկ. համայնքի ղեկավար Վ. Հովհաննիսյան

1.6. Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի օգոստոսի 23-ի N 59-Ա որոշման 3-րդ կետի գործողությունը դադարեցնելու և ուժը կորցրած ճանաչելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի	բացակա		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի			
Գևորգյան Արտավազդ Վարազդատի	բացակա		
Գրիգորյան Արմեն Գրիշայի	բացակա		
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի			
Սարգսյան Հասմիկ Ժորայի			
Սիմոնյան Արտուշ Էդվարդի	բացակա		
Ստեփանյան Գագիկ Ստեփանի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- .....7..... դեմ-.....0..... ձեռնպահ- ..0..

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 սեպտեմբերի 26
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 սեպտեմբերի 2018թ. N 61-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 31-Ի N 35-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետին համապատասխան, հիմք ընդունելով 2018 թվականի մայիսի 22-ին ընդունված «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-330-Ն օրենքի 2-րդ հոդվածը ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ավագանու 2013 թվականի հուլիսի 31-ի «Ջերմուկի համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, ինչպես նաև աղբահանության վճարի հաշվարկման և գանձման կարգը սահմանելու մասին» N 35-Ն որոշմամբ հաստատված կարգի III բաժինը շարադրել նոր՝ հետևյալ խմբագրությամբ՝

« 7. Աղբահանության վճարի հաշվարկը կատարվում է ելնելով շենքի կամ շինության գործառնական նշանակությունից, ընդ որում՝

1. Բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է՝

ա) ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ 100 դրամ Ջերմուկքաղաքում, 50 դրամ՝ համայնքի գյուղական բնակավայրերում:

2. Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում, այդ թվում՝ հասարակական և արտադրական շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

ա) առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացնող շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 70 (յոթանասուն) Հայաստանի Հանրապետության դրամ.

բ) հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայություններ, ինչպես նաև այլ գործունեություն իրականացնող հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 30 (երեսուն) Հայաստանի Հանրապետության դրամ.

գ) արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 10 (տաս) Հայաստանի Հանրապետության դրամ.

դ) կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 5 (հինգ) Հայաստանի Հանրապետության դրամ.

ե) շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարն ամբողջությամբ հաշվարկվում է տնտեսական գործունեության համար սահմանված առավել բարձր դրույքաչափով:»

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը :

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի բացակա			
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի			
Գևորգյան Արտավազդ Վարազդատի բացակա			
Գրիգորյան Արմեն Գրիշայի բացակա			
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի			
Սարգսյան Հասմիկ Ժորայի			
Սիմոնյան Արտուշ Էդվարդի բացակա			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- .....7..... դեմ-.....0..... ձեռնպահ- ....0....

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 սեպտեմբերի 26
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 սեպտեմբերի 2018թ. N 62-Ա

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետի պահանջներով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918-Ն որոշման ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հավանություն տալ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը. «Ջերմուկ Գրուպ» ՓԲ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության ստորև ներկայացվող հողամասերը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակությամբ.

h/h	սեփականության վկայականի համարը	կադաստրային ծածկագիրը	մակերեսը, հա	հողատեսքը
1	24072014-10-0009	10-016-0101-0012	0,2449	արոտավայր
2	10022014-10-0002	10-016-0214-0003	0,0821	վարելահող
3	10022014-10-0003	10-016-0214-0005	0,413	վարելահող
4	10022014-10-0004	10-016-0214-0004	0,16	վարելահող
5	10022014-10-0002	10-016-0214-0003	0,0821	վարելահող

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի	բացակա		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի			
Գևորգյան Արտավազդ Վարազդատի	բացակա		
Գրիգորյան Արմեն Գրիշայի	բացակա		
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի			
Սարգսյան Հասմիկ Ժորայի			
Սիմոնյան Արտուշ Էդվարդի	բացակա		
Ստեփանյան Գագիկ Ստեփանի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- .....7..... դեմ-.....0..... ձեռնպահ- ....0.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 սեպտեմբերի 26
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 սեպտեմբերի 2018թ. N 63-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ, ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67 հոդվածին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «գ» ենթակետին և 22-րդ կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Համաձայնվել Ջերմուկ համայնքի սեփականություն համարվող Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի N 16/2/1 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակությամբ 22,3 քմ մակերեսով հողամասը (գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, կադաստրային ծածկագիրը՝ 10-002-0015-0057) ըստ Ջերմուկ քաղաքի գլխավոր հատակագծի աճուրդով օտարելու մասին Ջերմուկի համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով հողամասի օտարման նպատակը՝ հասարակական նշանակության օբյեկտ կառուցելու համար, կառուցապատման ժամկետը՝ 3 (երեք) տարի, մեկնարկային գինը՝ 35 000 (երեսունհինգ հազար) դրամ:

2. Համաձայնվել Ջերմուկ համայնքի սեփականություն համարվող Ջերմուկ քաղաքի Մելիք-Ադամյան փողոցի N 3/1 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակությամբ 9,0 քմ մակերեսով հողամասը (գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, կադաստրային ծածկագիրը՝ 10-002-0019-0052) ըստ Ջերմուկ քաղաքի գլխավոր հատակագծի աճուրդով օտարելու մասին Ջերմուկի համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով հողամասի օտարման նպատակը՝ հասարակական կառուցապատման համար, կառուցապատման ժամկետը՝ 3 (երեք) տարի, մեկնարկային գինը՝ 20 000 (քսան հազար) դրամ:

3. Համաձայնվել Ջերմուկ համայնքի սեփականություն համարվող գյուղատնտեսական նպատակային նշանակությամբ 19,8 քմ մակերեսով հողամասը (հողատեսքը՝ այլ հողատեսք, կադաստրային ծածկագիրը՝ 0405-0401-) ըստ Ջերմուկ քաղաքի գլխավոր հատակագծի աճուրդով օտարելու մասին Ջերմուկի համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով հողամասի օտարման նպատակը՝ գյուղատնտեսական գործունեության համար, մեկնարկային գինը՝ 15 000 (տասնհինգ հազար) դրամ:

4. Համաձայնվել Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող Ջերմուկ քաղաքի Երևանյան խճուղի N 10/3/1 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակությամբ 400 քմ մակերեսով հողամասը (գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, կադաստրային ծածկագիրը՝ 10-002-0024-0196) ըստ Ջերմուկ քաղաքի գլխավոր հատակագծի աճուրդով օտարելու մասին Ջերմուկի համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով հողամասի օտարման նպատակը՝ հասարակական կառուցապատման համար, կառուցապատման ժամկետը՝ 3 (երեք) տարի, մեկնարկային գինը՝ 400 000 (չորս հարյուր հազար) դրամ:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի	բացակա		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի			
Գևորգյան Արտավազդ Վարազդատի	բացակա		
Գրիգորյան Արմեն Գրիշայի	բացակա		
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի			
Սարգսյան Հասմիկ Ժորայի			
Սիմոնյան Արտուշ Էդվարդի	բացակա		
Ստեփանյան Գագիկ Ստեփանի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- .....7..... դեմ-.....0..... ձեռնպահ- .....0.....

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 սեպտեմբերի 26
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 սեպտեմբեր 2018թ. N 64-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 4/5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 4/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, 71-րդ հոդվածի 3-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 29-36-րդ կետերով ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաշվի առնելով այն, որ ՀՀ կառավարության կողմից Ջերմուկ քաղաքում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում կատարված շինարարական աշխատանքների արդյունքում Ջերմուկ քաղաքի բնակիչ Անդրանիկ Ավետիքի Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասը (հիմք՝ 2007 թվականի նոյեմբերի 29-ի N 2378752 վկայական) նախագծա-նախահաշվային փաստաթղթերով ներառվել է բակային խաղահրապարակի ընդլայնման ծրագրում՝ տալ համաձայնություն վերջինիս՝ Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի N 4/1 հասցեում գտնվող 19,8 քմ մակերեսով հողամասի փոխանակմանը Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2018 թվականի օգոստոսի 28-ի N 28082018-10-0005 վկայական) Շահումյան փողոցի N 4/5 հասցեում գտնվող 20 քմ մակերեսով հողամասի հետ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի	բացակա		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի			

Գևորգյան Արտավազդ Վարազդատի	բացակա		
Գրիգորյան Արմեն Գրիշայի	բացակա		
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի			
Սարգսյան Հասմիկ Ժորայի			
Սիմոնյան Արտուշ Էդվարդի	բացակա		
Ստեփանյան Գագիկ Ստեփանի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- ....7.... դեմ-....0.... ձեռնպահ- ....0....

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 սեպտեմբերի 26
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 սեպտեմբերի 2018թ. N 65-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերով, հիմք ընդունելով Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի N 12-Ն որոշմամբ հաստատված կարգի 19-րդ կետը՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1.Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչ, Երևանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ուսանողուհի Էլեն Արմենի Հրաչյանին, որպես ուսման վարձի մասնակի հատուցում, տրամադրել 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի	բացակա		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի			
Գևորգյան Արտավազդ Վարազդատի	բացակա		
Գրիգորյան Արմեն Գրիշայի	բացակա		
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի			
Սարգսյան Հասմիկ Ժորայի			
Սիմոնյան Արտուշ Էդվարդի	բացակա		
Ստեփանյան Գագիկ Ստեփանի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- ...7... դեմ-...0... ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 սեպտեմբերի 26
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 սեպտեմբերի 2018թ. N 66-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23-Ի N 59-Ա ՈՐՈՇՄԱՆ 3-ՐԴ ԿԵՏԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Դադարեցնել Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի օգոստոսի 23-ի «Դրամական հատկացումներ կատարելու մասին» N 59-Ա որոշման 3-րդ կետի գործողությունը և այն ճանաչել ուժը կորցրած:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի	բացակա		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի			
Գևորգյան Արտավազդ Վարազդատի	բացակա		
Գրիգորյան Արմեն Գրիշայի	բացակա		
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովհաննիսյան Նարեկ Հարությունի			
Սարգսյան Հասմիկ Ժորայի			
Սիմոնյան Արտուշ Էդվարդի	բացակա		
Ստեփանյան Գագիկ Ստեփանի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- ....7..... դեմ-.....0..... ձեռնպահ- ...0.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 սեպտեմբերի 26
Ջերմուկ